

ՀԱՅԿ. ԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ՀՆԳՍՍԵԱԿԻ ԸՆԹԼՅՔԻՆ

ՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԻ ՄԷՋ

(Մոսկուայի 21—5—946 ուղղակի Երեւանին)

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Պ Ա Ս Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՐԵՒԱՆ.— Հնգամեայ պլանը կը նախատեսէ բազմաթիւ գործարաններու եւ կեդրոնական հիդրոէլեքտրակայաններու շինութիւնը, որոնք պիտի կրկնապատկեն ճարտարարուեստական արդիւնաբերութիւնը՝ 1940ի մակարդակի հետ բաղդատել վ: «Հայկական Գիտական Ակադեմիան, որ պատերազմի ընթացքին հիմնուեցաւ, գործօն դեր պիտի վերցնէ Հնգամեայ պլանի յաջող գործադրութեան աշխատանքներուն մէջ», ըսաւ Ակադեմիայի փոխնախագահ Վիքթոր Համբարձումեանը ԹԱՍՍԻ թղթակցին:

Ակադեմիայի բնագիտական ինստիտուտը պիտի զբաղի մասնաւոր աշխատանքներով, որոնցմով պիտի լրացուի երկրի բնագիտական քարտէսը եւ լաւագոյն կերպով պիտի ճշդուի մետաղածուլարաններու հիմնուելիք վայրերը: Ակադեմիայը ջրագիտական աշխատանոցը լայն չափերու վրայ պիտի ուսումնասիրէ կեդրոնական հիդրոէլեքտրակայաններու շինութեան հարցը եւ բազմաթիւ այլ էլեքտրական ուժի գործարաններու շինութիւնը: Այս վերջին գործարանները լոյս եւ շարժում պիտի տան գործարանային շարքի մը: Ակադեմիայի քիմիական ինստիտուտը կ'աշխատի սինթէթիք բաուչուկի արդիւնաբերութեան գործի կազմակերպման եւ բարելաւման, ինչպէս նաեւ բաուչուկի պատրաստութեան նախանիւթերու գործածութեան համար: Սույետ Հայաստանի հողային տնտեսութեան զարգացումը կապուած է կառուցողական ինստիտուտի գործելակերպին: Այս ինստիտուտի գործն է բոյսերու նոր տեսակներու յառաջացումը:

Համապատասխան աշխատանքներ կը կատարէ նաեւ Հողամշակութեան ինստիտուտը, որ կը նախատեսէ մեծ զարկ տալ հողային արդիւնաբերութեան լեռնային շրջաններու մէջ:

Հայ գիտնականները իրենց ուշադրութիւնը դարձուցած են հայ ժողովուրդի պատմութեան եւ բաղաբակրթութեան ուսումնասիրութեան: Պեղումներ պիտի կատարուին Հայաստանի հին մայրաքաղաք՝ Դուինի մէջ: Պատմութեան ինստիտուտը կը պատրաստէ «Հայ ժողովուրդի Պատմութիւնը» (եօթը հատոր): Գրականութեան ինստիտուտը կը պատրաստէ 6 հատորներէ բաղկացեալ գիրք մը՝ նուիրուած հայ գրականութեան: Այս գրքին մէջ պիտի ներկայացուի հայկական գրականութիւնը հին դարերէն մինչեւ մեր օրերը: Ակադեմիայի մարմարակերտ պալատները պիտի բազմապատկուին Օոր որդ Հնգամեայ պլանի ընթացքին: